մէջ: Նրա վրայ նայում էին գիւղացիները, որպէս իրանց նահապետի կամ պատրիարքի վրայ: Թէեւ Աւօն այժմ պաշտօնապէս ստացել էր «միրէ տիտղոսը եւ համարւում էր տեղային հայերի գլուխ կամ ներկայացուցիչ, եւ շէյխերի մէջլիսում ծնկի տեղ ունէր, ասիւամենայնիւ, նա չէր թողել իր պարզ, անփառասէր յարաբերութեան ձեւը հասարակ ժողովրդի հետ: Նա իր վարոեցողութեան մէջ ոչ մի բանով չէր ցոյց տալիս, թէ ինքը պաշտօնական մարդ է, թէ նա մի բանով բարձր է, քան հասարակ ամբոխը, այլ նայում էր ժողովրդին որպէս գերդաստանի հայրը իր ընտանիքին: Նա մինչեւ անգամ չէր թողել իր հին սովորութիւնները, իր հին պարապմունքը. շաբաթը մի քանի անգամ, հրացանը ուսից քարշ գցած, նա կ'երթար որսորդութեան. եւ այդ անում էր նա ոչ թէ զուարճութեան համար, այլ իր սիրելի արհեստը պատոելու համար:

Աւօն այս երկրում եւս գաղթական էր, որպէս Սալմաստում. ինչո՞ւ էր թողել իր բնիկ հայրենիքը, կամ ո՞ր տեղացի էր նա, — այդ մի գաղտնիք էր, որ սաստիկ կերպով պահւում էր նրա ընտանիքի մէջ: Բայց շատ անգամ ծերունի որսորդի թաւամազ յօնքերը խոժոռւում էին, շատ անգամ նրա բարի դէմքը պատում էր տխրութեան մռայլը, երբ հարցնում էին նրա անցեալից, երբ խօսք էր բացւում նրա հայրենիքի մասին: Երեւում էր, նրա անցեալը թողել էր խիստ տխուր յիշողութիւններ, որոնց մտաբերելը ոչ միայն անախորժ էր թւում, այլ մինչեւ անգամ սարսափ էր ազդում այդ անբախտ մարդու վշտահար սրտին...

ԻԴ. ՄԻ ՓՈՔՐԻԿ ՑՈՅՑ

Ծերունի որսորդը դարձաւ տուն միւս աւուր երեկոյեան պահուն: Կարօն եւ իր ընկերները ցայտնոեցան: Նա ասաց, թէ մի անակնկալ դէպք առիթ տոեց տղերքին մի օրով ետ ընկնել այն գործից, որի պատճառով պէտք է գնային մի տեղ: Ի՞նչ գործ, որտե՞ղ, — այդ մասին նա ոչինչ չխօսեց: Ես խնդրեցի նրանից պատմել դէպքը: Նա ասաց, որ շատ յոգնած է, պահանջեց մի բան ուտելու եւ խոստացաւ ընթրիքից յետոյ պատմել բոլորը: Մարօն մի քանի րոպէում կատարեց հօր պատուէրը. ես չմօտեցայ սեղանին, որովհետեւ ամենեւին ախորժակ չունէի: Ես միայն նայում էի Մարօին, որ նստած հօր մօտ, մատների աննշմարելի արագութեամբ գործում էր գուլպաներ, եւ առանց լռելու խօսում էր, թէ ինչ դրութեան մէջ նա գտաւ ինձ «քանդուած մատուռիէ մօտ, թէ մտածում էր նա «իմ գլխին մի օյին խաղալ», ամենեւին չցոյց տալ, թէ ինքը Մարօն է, եւ կողոպտել ինձ, որովհետեւ ես քնած էի, շատ